

ԹԵՅՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ



ՄԵՐՈ ԽԱՆՁԱԴՑԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծմանը նպատակաուղղված համազգային շարժման ծավալման գործում անուրանալի դերակատարություն է ունեցել հայ մեծանուն արձակագիր, պատմավիպասան Մերո Խանգաղյանը, որ առաջին իսկ օրերից ժողովրդի կողքին էր՝ որպես պայքարի գաղափարակիր ու կազմակերպիչ:

Նա ոչ միայն պատմության մեջ էր՝ իր գրական նախատիպերի ու կերպարների հետ, այլև պատմություն կերտող անհատականություն էր: Որպես ազգային-հայրենասիրական բացառիկ գիտակցություն ունեցող գրող՝ Խանգաղյանը երբևէ անմասն չի մնացել հայ ժողովրդի համար դժվարին, օրհասական ու բախտավճիռ տարիների հիմնախնդիրներից: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ մեկնելով ռազմաճակատ՝ անցավ պատերազմական իրադարձությունների բովով և համամարդկային տազնապների մղումով գրիչ վերցրեց՝ խոստովանելով, թե «պատերազմն ինձ գրող դարձրեց»: Այդպես էլ 1980-ական թվականների վերջին սկիզբ առած Արցախյան շարժման ժամանակ Խանգաղյանը բարձր քաղաքացիություն դրսևորեց՝ իր գրական ու հրապարակախոսական հարուստ պաշարը ի սպաս դրելով պատմական արդարությունը վերականգնելու երախտաշատ գործին:

* Հոդվածը ներկայացվել է 25.11.2019 թ., գրախոսվել՝ 15.12.2019 թ., տպագրության ընդունվել՝ 20.12.2019 թ.:

Թե՛ որպես գրող, թե՛ որպես գործիչ նա միշտ հայրենիքի ոգին վառ էր պահում: Խանգաղյանի գլխավոր մտասևեռումներից մեկը Արցախի հարցն էր, հայությանը պարտադրված գոյավիճակի բացահայտումն ու դրդապատճառների դատապարտումը: 1988-ի շարժումը պայմանավորված էր նաև խորհրդային ժամանակաշրջանի՝ հայրենասիրական՝ գորընդեղ երակը հունավորած գրական ժառանգությամբ՝ Չարենցից ու Բակունցից մինչև Շիրազ, Սահյան, Սևակ ու Խանգաղյան:

Խանգաղյանի ավանդը դրսևորվել է Արցախյան հիմնախնդրի հայանպաստ լուծման մի քանի հարթություններում: Ընտրվել էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, նամակներ էր գրում, ելույթներ ունենում հեղինակավոր ամբիոններից, դիմում ԽՍՀՄ բարձր ղեկավարությանը, առաջարկներ ու պահանջներ ներկայացնում՝ ներքին ու արտաքին պատասխանատվություններին համարձակորեն վերապահելով իրենց բաժինը: Անզիջում բանավիճում էր խորհրդային իշխանության այնօրյա ազդեցիկ ղեմքերի հետ, մանավանդ երբ հարցը վերաբերում էր պատմական արդարությանն ու դրա վերականգմանը: Եթե Հայաստանը մտնում էր ԽՍՀՄ կազմի մեջ, ապա կառավարական բարձրագույն մարմինները իրավունք չունեին անտեսելու հայ ժողովրդի պատմական անցյալը, կոնկրետ դեպքում՝ Արցախի՝ որպես Հայաստանի մաս կազմելու անառարկելի փաստը. «Տիեզերական հարց, որ ահա վաթսուն տարի է՝ երկնային կրակի պես փլվում է հայի վրա»¹:

Առհասարակ, խորհրդային ժամանակներում գրականությունը վիթխարի դեր ուներ հայ հանրային կյանքում: Գրողի ձայնը լսելի էր պետական բարձր օղակներում, նրա քաղաքացիական դիրքորոշումը կարող էր վճռորոշ լինել ազգային նշանակության հարցերում: Որպես խորհրդային գաղափարախոսության կրող՝ Խանգաղյանը, լինելով ԽՍՀՄ գրողների միության նախագահության անդամ, բազմիցս ԽՍՀՄ գրողների

¹ Խանգաղյան Ս., Ղարաբաղը կրակների մեջ, Երևան, 2006, էջ 3:

պլենումներում, համագումարներում քննադատել է ազգամիջյան հարաբերությունների թնջուկները՝ շեշտելով Լեռնային Ղարաբաղի՝ պատմական հայրենիքին միավորվելու արդար պահանջը:

Հայաստանի ազգային արխիվում պահպանվող Մերո Խանգաղյանի անձնական արխիվի նյութերը, արխիվային տարբեր ֆոնդերում գտնվող նրա վերաբերյալ փաստաթղթերը, մամուլում հրապարակված հոդվածները, նամակներն ու հարցազրույցները բնորոշում են ոչ միայն նշանավոր գրողին, այլև ժողովրդի արժանավոր քաղաքացուն:

Կյանքի մայրամուտին ապրելով Արցախի ազատագրության երազով՝ Խանգաղյանը շարահյուսեց «Ղարաբաղը կրակների մեջ» գեղարվեստավավերագրական երկը՝ հանրագումարի բերելով Արցախյան ազատագրական պայքարին նվիրված իր հասարակական, հրապարակագրական գործունեությունը: Այն պատմաճանաչողական մեծ արժեք ներկայացնող երկ է, որ հնարավորություն է տալիս ոչ միայն ծանոթանալու Արցախյան շարժման տարիներին Խանգաղյանի ծավալած օգտաշատ գործունեությանը, նրա քաղաքացիական համարձակ դիրքորոշումներին, այլև պատմաքաղաքական մի շարք կարևոր իրադարձությունների վերաբերյալ ստանալու համակողմանի տեղեկատվություն, ինչը երկը դարձնում է առավել արժեքավոր: Փաստագրական ու արխիվային բազմաթիվ վավերագրերի, վիճակագրական տվյալների, պատմագիտական նյութերի, նամակների, էլույթների, տարբեր մարդկանց հետ հանդիպումների ու զրույցների վերաքաղությունները Արցախյան շարժման ընդհանուր հիմնապատկերում առանձնակի նշանակություն են ստանում, դառնում ժամանակաշրջանի հայելին:

Հայաստանի ազգային արխիվում պահվող 1991 թվական, փետրվարի 7 թվակիրն ունեցող մի նամակում¹ դիմելով Մփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին՝ Խանգաղյանը գրում է, որ տպագրության է պատ-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 152, թ. 8, տպագիր, բնագիր:

րաստել երեք ձեռագիր, որից մեկը «Ու՛ր ես գալիս, այ գարուն. Ղարաբաղը կրակների մեջ» գիրքն է: Համառոտ ծանոթացնելով գրքի բովանդակությանը՝ նա խնդրում է կոմիտեին նյութական միջոցներ տրամադրել և գիրքը տպագրել արտասահմանում: Նամակում Խանգաղյանը վկայում է նաև երկու այլ ընթերցողին անձանոթ, անտիպ գործերի մասին՝ «Հայոց Նոյատունը կործանված» խորագրով, որն «ընդգրկում է Նախիջևանի հայության ոչնչացման արյունոտ պատկերը՝ 1918-1983 թվականներին: 20-22 հեղինակային մամուլ», ինչպես նաև «Բեկոր-բեկոր Հա-յաստան», որն ընդգրկում է Խանգաղյանի ուղեգրությունները՝ Իրաքում, Լիբանանում, Եգիպտոսում ու Սիրիայում:

1992 թվականի հոկտեմբերի 18-ին Վարդան Հակոբջան-յանին հասցեագրած մի նամակում¹ դարձյալ խոսելով ««Ու՛ր ես գալիս, այ գարուն. Ղարաբաղը կրակների մեջ» «հզորությամբ անչափելի» գրքի հնարավոր տպագրության մասին՝ ներկայացնում է բոլորովին այլ կառուցվածք՝ «Եռահատոր է՝ Ա.Բ.Գ. գրքեր – 1988, 1989, 1990: Պատրաստի»: Ավելին՝ գրում է, որ չորրորդ ու հինգերորդ գրքերը «հիմա է հյուսում», «այսինքն 1991 և 1992: Նույն ոգով»: Գիրքը սակայն լույս տեսավ հետմահու՝ 2006 թվականին՝ հեղինակի ակնարկած վերնագրային կառույցի երկրորդ մասով՝ «Ղարաբաղը կրակների մեջ» բաղկացած երեք ասքից: Թոռան հետ օրապահանջ հարցուպատասխանի խորհդանշական պատկերով սկսվող «մատյանն» ընդգրկում է 1987-ի դեկտեմբերից մինչև 1988-ի դեկտեմբեր Խանգաղյանի գրառումները, ուստի ենթադրելի է, որ այն հեղինակի ակնարկած եռահատորի Ա գիրքն է միայն: Բ, Գ, հետևաբար և 1991, 1992 թվականները լուսաբանող չորրորդ, հինգերորդ գրքերի ճակատագրերը մնում են անհայտ: Գրող, պատմաբան Բագրատ Ուլուբաբյանին հասցեագրած նամակներից² մեկում (27 հունվարի, 1993թ.) Խանգաղյանը ակնարկում է դարձյալ մեզ անհայտ «Արցախյան կանչեր» խորագրով վեպի մասին, որի վրա «աշխատում է տարուց ավել», և նշում նաև, որ «վերնագիրը պայմանական է, գուցե այլ անուն տա»:

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 798, ց. 1, գ. 1009, թ. 161, տպագիր, բնագիր:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 798, ց. 1, գ. 1013, թ. 24-26, տպագիր, պատճեն:

Ընթերցողին Խանգաղյանի գրչով Արցախի պատմության գեղարվեստական պատկերման մի կոթողային գործ է միայն հայտնի՝ «Շուշի»-ն՝ գրված Արցախյան շարժման անմիջական ազդեցությամբ Շուշիի ազատագրության նախաշեմին՝ 1991 թվականին, իսկ հետմահու հրատարակված «Ղարաբաղը կրակների մեջ»-ը վավերագրություն է, որը, ինչպես ինքն է նշել, ամբողջական չէ:



Շուշի. Ղազանչեցոց եկեղեցի

Գեղարվեստական վավերագրությունը հաճախ անվանում են մեմուարային գրականություն, որի մեջ մտնում են հուշագրությունը, ուղեգրությունը, փաստագրությունը, օրագրությունը և էսսեն: Խանգաղյանի երկում համադրվում են ն՝ հուշագրությունը, ն՝ օրագրությունը, ն՝ փաստագրությունը, մասամբ նաև էսսեն՝ հեղինակի ոճի անհատականությամբ: Թեև վավերագրությունը հատկանշվում է գեղարվեստական որոշակի արժեքով, սակայն հեռու է կատարելությունից: Հեղինակն ինքն էլ խիստ է արտահայտվել իր գրքի մասին, մատնանշել արագագրության պատճառները: «Թող ներեն ինձ նրանք, ում այս գործը կատարյալ չթվա: Որքան կարողացա, այն արի»¹: «Մի տարում այնքան, որքան արել եմ վաթսուն տարում՝ նույն Լեռնային Ղարաբաղի ցավի, Հայոց դատի այս մի ճյուղի արդար

¹ Խանգաղյան Ս., Ղարաբաղը կրակների մեջ, էջ, 16:

պահանջին վերաբերող: Եվ որպեսզի կարողանամ շատից-քչից բավարարել Անդրանիկիս անզիջում պահանջը, որ պահանջն է ողջ հայ ժողովրդի, ես արտակարգ գործս սկսեցի՝ քայլ առ քայլ տալով Հայոց Արցախ-Ղարաբաղի կործանման և նրա դյուցազնական պայքարի նշխարները՝ հանուն գոյության, հանուն թուրքի ստրկությունից նրա փրկության¹: Խանգաղյանը Ղարաբաղի մասին պատմող «արյունոտ» գիրքը ժառանգում է թոռանը. «Քեզ ասեմ, ժառանգ իմ, և դու կասես աշխարհին: Իմացիր, ճշմարտությունը չի սպանվում»²: Դարերի խորքերը չէ, որ պատրաստվում է տանել նրան. «Ես այստեղ միայն քեզ կներկայացնեմ Հայոց Ղարաբաղի անգութ կեղեքման պատմությունը՝ 1920 թվականից սկսած, այն էլ համառոտ ու պարզեցրած, որ քեզ համար մարսելի լինի, որ դու երբեք չմոռանաս մեր ցավը ու ավանդես քո թոռներին»³:

Իրապես, «Ղարաբաղը կրակների մեջ»-ը հրապարակագրական երկ է՝ մատուցված որոշակի գեղարվեստական հանդերձանքով: Ամեն դեպքում, Խանգաղյանի վավերագրումները դուրս են գալիս անձուկ տեղեկատվության, օրագրության շրջանակներից, հաճախ գեղարվեստականանում են՝ դառնալով ֆելիետոն, ակնարկ, էսսե, պամֆլետ և այլն:

«Կործանման սկիզբը» խորագրով առաջին ասքում 1920-ական թվականների պատմական եղելությունները զուգահեռելով 1970-80-ականների անցուդարձի հետ՝ Խանգաղյանը խորհրդածում է, բանավիճում, հեզնում, նկարագրում «եղբայրական» ժողովրդի՝ Ղարաբաղի հայության շրջանում իրականացրած սպանդի սահմոկեցուցիչ տեսարաններ, անխնայորեն քննադատում ազգամիջյան հարաբերությունների հոռի երևույթները, ազգային ինքնորոշման իրավունքի շարունակական ոտնահարումն ու անտեսումը, ցույց տալիս պատմական երևույթների պատճառահետևանքային կապերը, որոնց վկայակոչման նպատակը մեկն է՝ ընդգծել Արցախյան հարցի լուծման

¹Նույն տեղում, էջ 4:

²Նույն տեղում:

³Նույն տեղում:

միակ ուղին՝ ինչ գնով ուզում է լինի՝ թոթափել տասնամյակների անպատիվ ստրկությունը և միավորվել մայր հայրենիքին:

Ամբողջ շարադրանքում պատկերավոր բացատրություններով Խանգաղյանն ընդգծում է ԽՍՀՄ ղեկավարների անտարբերությունը, մեղկությունը, նաև մեղսակցությունը Ղարաբաղին պարտադրված ճակատագրի նկատմամբ:

«Ղարաբաղը Ադրբեջանին վերադարձնելու հարցը Անդրերկրկոմը 1921 թվականի հունիս-հուլիս ամիսներին քննարկել է ութ անգամ: Ութ անգամ էլ որոշվել է երկրամասը վերադարձնել Հայաստանին: Սակայն... Սակայն չի վերադարձվել հենց իր՝ շատ բաներ խոստացող, քիչ բան կատարող Լենինի չարակամությամբ»¹: Քանիցս շեշտվում է, որ ճակատագրական հարցում Խորհրդային Հայաստանի Ժողովուրդն ու ՀԿԿ Կենտկոմի բյուրոն ոչ միայն շահագրգիռ չէին, այլև կատարյալ անգորություն ցուցաբերեցին՝ զուրկ պետական ըմբռնողությունից: «Երևանում մեր ղեկավարները,-գրում է Խանգաղյանը,- գրեթե բոլորը չէին ուզում զբաղվել Ղարաբաղի հարցով կամ զբաղվում էին ահաբեկված, կիսատ-պռատ: Ավաղ, Հայաստանի այդ օրերի ղեկավարները ոչ թե մտահոգված էին Կարսի, Նախիջևանի ու Ղարաբաղի փրկության հարցերով, այլ «բոլշևիկորեն» միմյանց միս էին ուտում, իրենց լղարիկ զենքերն ուղղում ոչ թե հայությանը Նախիջևանում ոչնչացնող թուրքերի, այլ դաշնակցականների դեմ»²:

Հայոց պատմության խորքից եկող և մինչև մեր օրերը հասնող նույն ախտն է, որ Խանգաղյանի գրչին փոխանցում է տխուր պարտականությունը արձանագրելու, պախարակելու խորհրդային ղեկավարների որդեգրած այդ այպանելի կեցվածքը, «պետական ու կուսակցական անգորությունը», որ կրկնվեց նաև շարժման տարիներին: «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը վախկոտաբար ժամանակին չարձագանքեց ԼՂԻ մարզի որոշմանը՝ մտնել Հայկ. ԽՍՀ-ի կազմի մեջ, որ

¹ Նույն տեղում, էջ, 6:

² Նույն տեղում, էջ, 7:

կայացավ 1988-ի փետրվարի 20-ին: Այդ խնդրանքի քննարկումը հետաձգվեց ամբողջ չորս ամիս, մինչև Ադրբեջանի նախնականները կարողացան Մոսկվայում իրենց արյունոտ գիծն անցկացնել»¹, - եզրակացնում է Խանգաղյանը:

Արտաքին վտանգների ու դրանց պատճառների դեմ ընդվզող, ըմբոստացող Խանգաղյանը հաճախ նույն վերաբերմունքն է արտահայտում ներքին վտանգների և նրանց հետևում թաքնվող պատասխանատուների դեմ:

Գրողը հրաշալի ծանոթ է հայ ժողովրդի պատմությանը, փաստական նյութի առատ գործածությամբ էլ ներկայացնում է Արցախի ազատագրական պայքարի նախադրյալները: 20-րդ դարասկզբի ներքաղաքական վիճակի մանրակրկիտ նկարագրությունը մի նպատակ ունի՝ ի ցույց դնել նորօրյա իրականության կենսահիմքերը՝ պատմության փորձին առերեսվելու ճակատագրականությամբ:

Խանգաղյանի համար հստակ է՝ «Ստալինի գռեհիկ միջամտությամբ որոշվեց Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ԽՍՀ-ի սահմաններում»²: Հայ ժողովրդի դեմ կատարված նոր ոճրագործության, պետական ու կուսակցական ուրացության պատասխանատուն հենց Նախիմանով-Ստալին երկյակն էր՝ Օսմանյան Թուրքիայի թելադրանքով: Նույնն արեց նաև Բրեժնև-Մուսլով սև լծասարքը՝ քանիցս մերժելով ԼՂԻՄ-ի տարեցտարի նոսրացող հայ բնակչության կամավոր սկզբունքի դրսևորումները. ժողովուրդը նախ 1966-ին՝ 45.000 ստորագրությամբ, ապա 1977-ին՝ 70.000 ստորագրությամբ հայրենիքին միավորվելու պահանջով դիմեց Մոսկվա կրկնակի մերժվելով և շարունակելով ենթարկվել անօրինակ հալածանքների: 1977-ին, երբ ընդունվում էր նոր Սահմանադրությունը, ավելի քան մեկ միլիոն հայերի խնդրանքը Բրեժնևին, որ գոնե ԼՂԻ մարզի պաշտոնական անվանն ավելացվի «հայկական» տերմինը, ինչպես երկրի բոլոր մյուս ինքնավար մարզերն ունեին, ևս դեմ

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, էջ 8:

նետեցին: Մեծագույն ցավով է Խանգաղյանը երկրորդում պատմական այդ ցավալի փաստերը, ոգեսթափության կոչ անում՝ տալով համարձակ գնահատականներ:

Ներազգային բարդ իրադրության մեջ տեսակետների, դիրքորոշումների հստակ բանաձևումներով Խանգաղյանը լուսաբանում է համազգային շարժման նպատակը, ձևավորում, ուղղորդում է հայ զանգվածներին, ստեղծում հանրային կարծիք: Իր համամիութենական հեղինակությամբ, գրչի ուժով, կոնկրետ գաղափարական աշխատանքներով Խանգաղյանը մեծապես նպաստեց, որ շարժումը վերածվի համաժողովրդական պայքարի: Նա օրվա տագնապների մեջ էր, վերահաս իրադարձությունների, հանդիպումների ու քննարկումների կենտրոնում, որոնց մասին օրագրային ճշգրտությամբ գրում է իր մատյանում: Այսպես, օրինակ՝ «Դեպքերը նոր թափ են առնում: Գրողների տանն են: Ասացին՝ Մոսկվայից ժամանել են Դոգիլին ու Լուկյանովը: Մարդկային վիթխարի հոսանք է բարձրանում Բաղրամյան պողոտայով: Ես, Միլվան, Հենրիկ Իգիթյանն ու Վարդգես Պետրոսյանը ևս միացանք ցուցարարներին: Հզոր, վեհ ցույց է Կենտկոմի շենքի առաջ»¹ (23.08.88թ.), «Ժամը 12-ին գրողների ժողով կայացավ: Լսեցինք հայ ժողովրդին հղած Գորբաչովի ուղերձը: Իմ խոսքը սա է: Ղարաբաղը Հայաստանին միավորելու շարժումը նոր չէ: 1965-ին ևս ծագեց: Մոսկվայից հանձնաժողով եկավ՝ Սեմիչանսկու գլխավորությամբ: Ես ու Էդուարդ Թոփչյանը նրա հետ զրույց ունեցանք յոթ ու կես ժամ: Ասացի, որ Գորբաչովը ճիշտ չի դիրքորոշվում ազգային հարցում: Միսալ է, երբ միտինգներ անելը ոմանք որակում են իբրև վնասակար: Ասում են՝ ամրացնել մեր երկրի ազգերի բարեկամությունը: Այո, ամրացնել, բայց ոչ մեր՝ հայերիս հաշվին: Մեր Կենտկոմում ոմանք մեզ մեղադրում են իբր մենք մթազնում ենք հայ և աղբբեջանցի ժողովուրդների բարեկամությունը: Սա պրովակացիա է: Բայց ԼՂԻՄ-ի հարցը շուտափույթ պետք է քննարկվի

¹ Նույն տեղում, էջ 109:

Մոսկվայում՝ Հայկ. ԽՍՀ-ին վերադարձնելու որոշումով: Հայաստանի կառավարությունը պետք է իր բողոքը ներկայացնի Միութենական կառավարությանը և պաշտպանի ժողովրդի պահանջը: Սակայն Հայաստանի կառավարությունը վախկոտ է ու ոչինչ չի անում» (27.02.88թ.):

Պատմական փաստերի վկայակոչումներին զուգահեռ գրքում բերվում են «արյունոտ դեպքերի» նկարագրություններ, որպեսզի «շատ միամիտ հայերի համար պարզ լինի, թե ինչ դժոխային վիճակում է ապրում հայը հայի Ղարաբաղում: Ուզում եմ «ինտերնացիոնալիստ» կոչված քողով կուրացած շատերի աչքը բաց անել: Կհաջողվի՞, չգիտեմ»¹: Խանգաղյանն իրավունք ուներ այդքան հռեետես լինելու, գալիք օրերը գուշակելու: Եվ այդ բոլոր նախատեսությունները տարիներ անց շոշափելի իրականություն պիտի դառնային: Կյանքն ու իրականությունը ցույց տվեցին, որ այն, ինչ համարվում էր հռեետեսություն, իրականում հեռատեսություն էր ու հստակատեսություն: Հայ ժողովրդի տառապանքների ու տխուր ճակատագրի թիվ մեկ պատասխանատուն Խանգաղյանի համոզմունքով խորհրդային վարչակարգն է, որ հաճախ թիրախ է դառնում նրա նոթագրումներում: «Օ՛, դժոխք, որիդ անունը «Խորհրդային է»²: Խանգաղյանը, մատնանշելով պատմության չարաղետ փորձը, սուր քննադատություններ է ուղղում պետական ու կուսակցական հայ վերնախավին, որ «պարզապես անպետք զանգված է մեզ համար»: Հայի գլխով անցնող սոսկալի իրողություններից հետո գոռալ, թե «...մեր երկրում մարդու ազատություն է, ազգերի կատարյալ եղբայրություն, պարզապես անբարոյական սրտխառնուք է», գրում է Խանգաղյանը: Ինչպես կարելի է համակերպվել հայի անարդար ճակատագրի հետ, «...համակերպվելու հիմնական կողմնակիցներն ու քարոզիչները կուսակցական փափուկ աթոռների ու պետական լիքը ախոռների վրա նստածներն են»³:

¹ Նույն տեղում, էջ 29:

² Նույն տեղում, էջ 66:

³ Նույն տեղում, էջ 67:

Հայի փորձառությունը, գրողի ու մտավորականի առողջ բնագործ, ազգային խնդիրների լուծման համառ պարտավորվածությունը թելադրում էին Խանգաղյանին՝ սթափ հետևելու իրադարձություններին, ժամանակին ու տեղին արձագանքելու կուսակցական հայավնաս ու պառակտիչ որոշումներին, Ադրբեջանի ղեկավարների պրովակացիոն ելույթներին, մամուլի հրապարակումներին, որոնց նպատակը բոլոր հնարավոր միջոցներով պատմական ճշմարտության պարտակումն էր: Հատկանշական են Ջիա Բունիաթովի հայտնի կեղծաշարարանքների վերաբերյալ Խանգաղյանի կոշտ դիրքորոշումները, ժխտողական ելույթներն ու բաց նամակները: Գրքում նա առատ մեջբերումներ է անում իր ելույթներից՝ անխնայորեն մերկացնելով «խորհրդային ակադեմիկոսի սքեմ հագած», բարբարոս, ցեղասպան ու աշխարհաքանդիչ տարրերին նոքարի պես երկրպագող, «փորձված ու մոլի կողոպտիչ», պատմության ստոր կեղծարար Ջիա Բունիաթովին: «Կամենա, թե չկամենա Բունիաթովը, հայ ժողովուրդը ավելի քան երեք հազար տարի շարունակ իր պետական կազմակերպված էությունն ու բովանդակությունն ուներ և ունի իր հայրենիք Հայաստանում: Կարծես թե հենց նրան նկատի ունենալով է ասվում՝ շունը հաչում է, իսկ քարավանը գնում է»¹: Արցախցիների ոտնահարված իրավունքները պաշտպանելու նպատակով Խանգաղյանն անընդհատ իր մտահոգություններն է արտահայտել խորհրդային ղեկավարներին ուղղված նամակներում ու դիմումներում: Վավերագրության մեջ Խանգաղյանը զետեղել է Ղարաբաղի հարցի շուրջ տեղական ու միութենական մամուլին հղած իր բոլոր խնդրադիր գրությունները, որոնցից շատերը չեն հրապարակվել կամ հրապարակվել են զգալի կրճատումներով: «Երևանի «Կոմունիստը» իմ խոսքը չտպագրեց: Դե, պարզ է, «Կոմունիստը» ևս հայի թերթ չէ, իմ թերթը չէ»²: «Խորհրդային մամուլը կեղծում է ամեն ինչ: Այդ կեղծիքը ևս ուժ է ստանում

¹Նույն տեղում, էջ 60:

²Նույն տեղում, էջ 145:

պետությունից»¹: Խանգաղյանը քաղաքերումներ է արել նաև արտասահմանյան թերթերից, որոնք արձագանքել են օրվա իրադարձություններին և ավելի ճշգրիտ լուսաբանել Ղարաբաղյան հարցի էությունը՝ առանց տուրք տալու խորհրդային մտակաղապարներին:

Պատմական մեծ հնչեղություն ունեն հատկապես Բրեժնևին, Գորբաչովին Խանգաղյանի հասցեագրած նամակները, որոնք ժամանակին լայն, կարելի է ասել ոչ միայն միութենական, այլև միջազգային արձագանքներ ունեցան: Վավերագրելով Արցախյան շարժման ծավալման գրեթե ամբողջ ընթացքը՝ Խանգաղյանը մանրամասնորեն ներկայացնում է նաև այդ աղմկահարույց նամակների գրության շարժառիթներն ու կենսահանգամանքները:

Առաջին նամակը հասցեագրվել է ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լեոնիդ Բրեժնևին՝ 1975 թվականի մայիսի 13-ին: Ազդակը կուսակցության Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կևորկովի զեկուցումն էր մարզկոմի պլենումում, որ «հակահայկական, հակամարդկային, պանթուրքիստական հայհոյանքների կույտ էր»²: Չեկուցումը տպագրվել էր նաև «Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1975 թվականի մարտի 23-ի համարում, որից հետո հակահայկական նույն վտանգավոր կրակը բորբոքել էին նաև մարզի շրջանների բոլոր թերթերը: Կևորկովի վարքագծի մասին Խանգաղյանը նախ հեռագրել էր Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղար Հեյդար Ալիևին, որը չէր արձագանքել: Խանգաղյանը կենտկոմի ղեկավարությանը մեղադրում է բացահայտ հայահալած քաղաքանություն վարելու, Լեոնային Ղարաբաղի հայությանը Ադրբեջանի ճիրաններում խեղդելու համար: Այնինչ «թե՛ ազգային, թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական նկատառումներով Ղարաբաղի Հայկական Ինքնավար Մարզը պետք է մտնի Հայկական Հանրապետության կազմի մեջ»: Նա Բրեժնևի

¹ Նույն տեղում, էջ 165:

² Նույն տեղում, էջ 37:

ուշադրությունն է հրավիրում Ղարաբաղի պատկանելության հարցը հանկարծազուտ վճռելու՝ Կնոբկովի ապօրինի կեցվածքին և պատասխան ակնկալում՝ հորդորելով զսպել զազրախոսին: Խանգաղյանը համոզմունք է հայտնում, որ «Խորհրդային պետության ստեղծման առաջին օրերից օրակարգի մեջ մտած Ղարաբաղի հարցը կլուծվի, այն կվերադարձվի Հայկ. ԽՍՀ-ին, դրանով իսկ կամրապնդվի հայ և ադրբեջանական ժողովուրդների միջև եղած բարեկամությունը, ինչ-որ չափով կբարձրացվի մեր սոցիալախստական կարգերի վարկաբեկված հեղինակությունը»¹: Խանգաղյանը ցավով նշում է, որ նամակի պատասխան չստացավ, ավելին՝ բոլոր փորձերը՝ այն մամուլում հրապարակելու, ապարդյուն անցան:

Երկրորդ բաց նամակը Բրեժնևին Խանգաղյանը հասցեագրել է 1977 թվականի հուլիսին: Նոր նամակի առիթը «Проблемы мира и социализма» ամսագրի 1977 թվականի թիվ 6 համարում հրապարակված հոդվածն էր, որում հերթական անգամ աղավաղվում էր Արցախի պատմությունը: 32 լեզվով տպագրվող և աշխարհի 145 երկրներում տարածվող պարբերականի հրապարակումը ստիպում է Խանգաղյանին՝ կրկին դիմելու ԽՍՀՄ ղեկավարին՝ պահանջով. «Մեր միասնական հզոր պետության սահմաններում գտնվող զուտ հայկական մարզը, ավելի քան 80 տոկոս հայ բնակչությամբ, հայկական դպրոցներով, պետական հայերեն լեզվով պետք է գտնվի Խորհրդային Սոցիալիստական Հայաստանի կազմում»²: ԽՍՀՄ առաջին դեմքը պարտավոր է լուծել մի հարց, որ «ավելի քան կես դար անարդարություն է մարմնավորում», և որի արդարացի լուծումը «կզնահատվի որպես ազգային քաղաքականության հաղթանակ»:

Խանգաղյանը նույն ընթացքում նամակ է հղել նաև ԽՄԿԿ կենտկոմի բաժնի վարիչ Ե.Տյաժնիկովին և գրքում քաղաքեումներ արել նաև այդ նամակից: Նա հիշեցնում է, որ

¹ Նույն տեղում, էջ 39:

² Նույն տեղում, էջ 42:

Ղարաբաղի խնդիրը գոյություն ունի 1921-1923 թվականներից, երբ հայկական մարզը ապօրինի մտցրին Ադրբեջանի կազմի մեջ: Նամակում խոսում է նաև Նախիջևանի մասին՝ որպես նույն անարդարության դրսևորում: Ժամանակն է արդարամտությամբ ու սկզբունքայնությամբ նայելու ճշմարտության աչքերին և Ղարաբաղը վերադարձնելու Հայկական ԽՍՀ-ին:

Խանգաղյանը խստադատ մի նամակ էլ հղել է «Проблемы мира и социализма» ամսագրի խմբագրությանը՝ մասնավորապես նշելով. «Ձեր հրապարակած ռեպորտաժի շատ երգարակցություններ ու վկայություններ պարզապես հրեշավոր են: Դուք մի ամբողջ ժողովրդի ամենից սրբազան զգացմունքներն եք վիրավորել»¹: Երկու նամակներն էլ անպատասխան են մնացել: Եվ քանի որ «Проблемы мира и социализма» ամսագիրը տպագրվում էր Չեխոսլովակիայի մայրաքաղաք Պրահայում, Խանգաղյանը մի նամակ էլ հասցեագրում է այդ երկրի դեկավար Հուսակ Գուստավին, հորդորում արձագանքել հայ ժողովրդի արդար պահանջին և դատապարտել շրջանառվող կեղծիքը: «Համոզված եմ, որ շուտ թե ուշ, Ղարաբաղյան հարցը պետք է որոշվի: Չի կարելի հանդուրժել այն, որ Հայկական Ինքնավար Մարզը անջատված է իր մայր հայրենիքից»²:

Բրեժնևին հղած երկրորդ նամակը վիթխարի արձագանք ունեցավ աշխարհասփյուռ հայության շրջանում: Առաջինն այն տպագրեց սփյուռքի «Զարթոնք» թերթը (1977թ., հոկտեմբերի 20), հետո աշխարհի գրեթե բոլոր հայկական թերթերը: Այն թարգմանվեց ու հրապարակվեց նաև այլ լեզուներով, հաղորդվեց հեռուստացույցով, ռադիոյով:

Նամակի առաջ բերած աղմուկից հետո Խանգաղյանին իր մոտ է կանչել նաև Կարեն Դեմիրճյանը, պարզաբանումներ պահանջել: «Այսպես՝ մի ամսվա ընթացքում ութ անգամ ինձ կանչեցին Կենտկոմ», - հիշում է Խանգաղյանը³: Նամակի առնչությամբ վավերագրության մեջ նա քաղաքերումներ է

¹ Նույն տեղում, էջ 44:

² Նույն տեղում, էջ 45:

³ Նույն տեղում, էջ 46:

անում նաև սփյուռքահայ մամուլի ոգեշունչ արձագանքներից: «Հայ ազգի արժանագույն գավակներից մեկի» սխրավից քայլին բանտից շտապել է գնահատական տալ նաև Գուրգեն Յանիկյանը, որ, Խանգաղյանի վկայությամբ, «մինչև իր հերոսական գործը կատարելը մեկ տարի առաջ եղել է իմ տանը (Նորքում)»: Խանգաղյանի հանրահռչակված նամակին 1978 թվականին արձագանքել է նաև Բեյրութում Միմոն Միմոնյանի խմբագրությամբ լույս տեսնող «Սփյուռք» շաբաթաթերթը՝ «Ղարաբաղ և անոր պաշտպանները» վերտառությամբ հոդվածով, որին ամենայն հավանականությամբ Խանգաղյանը ծանոթ չի եղել և չէր էլ կարող ծանոթ լինել, եթե հաշվի առնենք, Արցախի հարցը արծարծել՝ դառնալով հիմնախնդրի բարձրաձայնման առաջամարտիկը ոչ միայն Սփյուռքի, այլև հայ մամուլի պատմության մեջ ընդհանրապես: Հոդվածի հեղինակ Լևոն Երկաթը, ողջունելով հայրենի գրողին համահայկական շահեր հետապնդող բաց նամակի համար, գուգահեռ մեղադրում է արտասահմանի հայ քաղաքական կուսակցություններին, որոնք քար լռություն են պահպանում հայկական հողերի հարցի վերաբերյալ: Վավերագրության մեջ Մերո Խանգաղյանի արտահայտած այն համոզմունքը, թե «...միջազգային մասշտաբով Հայ Դատը առաջ է մղվում նաև Բրեժնևին գրածս իմ նամակ-պահանջի շնորհիվ», փոքր-ինչ ինքնագովություն է, որովհետև հարցին միջազգային հնչեղություն տվեց «Սփյուռք» պարբերականը՝ ի դեմս խմբագրապետ Միմոն Միմոնյանի, որ 1960 թվականին առաջին բաց նամակը հասցեագրեց Ադրբեջանի նախագահ Ալիևին՝ հրապարակելով «Սփյուռք»-ում:

Վավերապատումի երկրորդ ասքը՝ վերնագրված «Մարտը տալիս է ձնծաղիկ», գրեթե եղեռնապատում է: Խանգաղյանը նկարագրում է Սումգայիթյան դեպքերը, փաստավավերագրական ճշգրտությամբ ներկայացնում Սումգայիթում հայերի նկատմամբ կատարված բռնությունները՝ հենվելով ակա-

նատեսների վկայությունների, փաստական հարուստ նյութի վրա: «Մուսկայիթի հայերի կոտորածը նման է 1915-ի Կ.Պոլսի հայերի նախնական ջարդին», - դառնորեն եզրակացնում է Խանգաղյանը և պատում առ պատում բացում այդ զարհուրելի օրերի երակները: «Մեր ձնծաղիկները, սակայն, սպիտակ չեն, այլ կարմիր հայի արյամբ ներկված»:

Ամփոփենք. Խանգաղյանի «Ղարաբաղը կրակների մեջ» գեղարվեստական վավերագրության մեջ ներկայացված է Ղարաբաղյան շարժման ամբողջ ընթացքը՝ հիմնականում օրագրային ու փաստագրական եղանակով, ինչը հնարավորություն է տալիս բոլոր նրբերանգներով պատկերացնելու ժամանակին հայ ժողովրդի առջև ծառայած խնդիրները, Արցախյան ազատամարտի պատմաքաղաքական նախադրյալները, ժողովրդի հերոսական ոգու թռիչքը, միահավաքվելու, մեկտեղվելու գործնդեղ կամքը՝ հանուն Արցախի գոյահաստատման: Գրող-վավերագրի գրչով հմտորեն ու բազմակողմանիորեն, հաճախ պատմաքննական լուսաբանման են ենթարկվել Արցախյան համազգային շարժման ծավալման բարդ ու ոչ միանշանակ գործընթացները, օբյեկտիվորեն երևակվել հիմնահարցի հետագա զարգացումներն ու հնարավոր բոլոր ելևէջները, որոնց կենտրոնում հենց ինքն է՝ Արցախյան շարժման նախանձախնդիրներից ու դրոշակակիրներից մեկը, ազատագրության դարավոր երազի օրհներգուն: Խանգաղյանը հաճախ պատմագետի հայացքով է փորձում բացահայտել Ղարաբաղյան հարցի առաջացման խորքային պատճառահետևանքային կապերը, թե ինչու՞ և ինչպե՞ս այն դուրս մղվեց դիվանագիտական ակտիվ գործառույթների քաղաքական դաշտից՝ պարզապես տեղափոխվելով խորհրդային հանրապետությունների շահադիտական հարաբերությունների ոլորտ: Գրողը հաճախ վկայակոչում է պատմության դասերը, որովհետև Արցախյան հիմնախնդրին վիճակված էր առերեսվել պատմության դառը փորձի հետ:

ՄԵՐՈ ԽԱՆՁԱԴՑԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽՑԱՅԱՆ

ՇԱՐԺՈՒՄԸ

ԱՄՓՈՓՈՒՄ

ԹԵՂՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հողվածը նվիրված է հայ մեծանուն արձակագիր Մերո Խանգաղյանի՝ Արցախյան շարժման գործում ունեցած դերակատարության արժևորմանը: Առաջին իսկ օրերից լինելով ժողովրդի կողքին՝ որպես պայքարի գաղափարակիր ու կազմակերպիչ՝ Խանգաղյանը բարձր քաղաքացիություն դրսևորեց՝ իր գրական ու հրապարակախոսական հարուստ պաշարն ի սպաս դրելով պատմական արդարությունը վերականգնելու երախտաշատ գործին: Կյանքի մայրամուտին ապրելով Արցախի ազատագրության երազով՝ Խանգաղյանը շարահյուսեց «Ղարաբաղը կրակների մեջ» գեղարվեստավավերագրական երկը՝ հանրագումարի բերելով Արցախյան ազատագրական պայքարին նվիրված իր հասարակական, հրապարակագրական գործունեությունը:

Բանալի բառեր - Մերո Խանգաղյան, Արցախ, Արցախյան շարժում, ազատագրական պայքար, գեղարվեստական վավերագրություն, պատմական փաստ, հրապարակախոսություն:

СЕРО ХАНЗАДЯН И АРЦАХСКОЕ ДВИЖЕНИЕ

РЕЗЮМЕ

ТЕЙМИНА МАРУТЯН

В статье рассматривается и оценивается роль выдающегося армянского писателя Серо Ханзадяна в Арцахском движении. С первых дней этого движения, будучи идеологом и организатором борьбы, Ханзадян проявил высокую гражданскую активность, посвятив весь свой литературный и историко-общественный опыт достойной цели восстановления исторической справедливости. Будучи на закате жизни, живя мечтой об освобождении Арцаха, Ханзадян создал основанное на документальном материале произведение «Карабах в огне», которым подвел итоги своей публицистической деятельности, посвященной Арцахской освободительной борьбе.

Ключевые слова: Серо Ханзадян, Арцах, Арцахское движение, освободительная борьба, художественная литература, исторический факт, гласность.

SERO KHANZADYAN AND THE ARTSAKH MOVEMENT

SUMMARY

TEHMINA MARUTYAN

The article deals with the appreciation of the great Armenian novelist Sero Khanzadyan for his role in the Artsakh movement. From the earliest days, being an ideologist and organizer of the struggle alongside the people, Khanzadyan displayed a high civic consciousness, devoting his rich literary and publicist resources to the gracious task of restoring historical justice. Living with dream of liberating Artsakh at the sunset of his life, Khanzadyan recited the artistic and documentary work "Karabakh in Fire", summing up his public, journalistic work on the Artsakh Liberation Struggle.

Keywords: Sero Khanzadyan, Artsakh, Artsakh movement, liberation struggle, fiction, historical fact, publicity.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Խանգաղյան Ս.**, Ղարաբաղը կրակների մեջ, Երևան, 2006, 256 էջ:
2. ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 152; ֆ. 798, ց. 1, գգ. 1009, 1013: